ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԲՈՒԼՂԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

(18-ը մայիսի 1975 թ., Սոֆիա)

Ձերդ Սրբություն,

Տիրոջ ողորմությամբ, ուրախ սրտով ճամփա ելանք Էջմիածնի Մայր Աթոռից՝ փոխադարձ այցելության գալու Ձեզ ու Մեր եղբայրական սիրո ողջույնը բերելու ձեր պատմական սուրբ եկեղեցուն, Ձերդ Սրբության և ձեր եկեղեցվո սուրբ Սինոդին:

Թող Աստված օրհնի Մեր այս նոր հանդիպումը, որպեսզի ներշնչված ու զորացած սուրբ Հոգով առավել ևս ամրապնդենք մեր եղբայրությունը և մեր երկու քույր եկեղեցիների ավանդական բարեկամությունը, մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին ծառայելու լուսավոր ճանապարհի վրա:

Մեր հանդիպման այս պահը նվիրական է Մեզ համար: Թույլ տվեք մի անգամ ևս սրտագին շնորհավորել Ձեր ընտրությունը իբրև պուլկար եկեղեցու հովվապետ և աղոթել, որ Տերը պարգևի քաջառողջ երկար տարիներ՝ առաջնորդելու ձեր հավատացյալ ժողովուրդը և լուսավորելու ձեր սուրբ եկեղեցին, պուլկար օրթոդոքս եկեղեցին, որ իր փառավոր անցյալով, իր հավատքի մեծ վկայություններով, իր ստեղծած հոգևոր ու մշակութային սքանչելի արժեքներով և իր ներկա գործունեությամբ հանդիսանում է ամենանշանակալի եկեղեցիներից մեկը Արևելքի օրթոդոքսության:

Ձերդ Սրբության իմաստուն ղեկավարությամբ թող Է՛լ ավելի զորանա ու ծաղկի ձեր մեծ եկեղեցին՝ ի փառս Աստուծո և ի մխիթարություն համայն քրիստոնյա աշխարհի:

Մեր օրերին, երբ մարդիկ ու ժողովուրդներ ծարավի են հավիտենական ճշմարտությունների, ծարավի են իրենց կյանքի խաղաղության և իրենց հոգիների փրկության, Մենք հավատում ենք, թե Քրիստոս գերագույն մխիթարությունն է բոլորիս համար, համայն աշխարհի համար, իբրև Փրկիչ ազգի մարդկան:

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս» (Հովհ. Գ 16—17):

Սիրեցյալ Եղբայրներ Մեր ի Քրիստոս, այս մտածումներով և երազանքներով մոտենանք իրար, իբրև Քրիստոսով եղբայրներ, և աղոթենք ու գոր-

ծենք անձանձրույթ՝ ավելի ու ավելի բաշխելու համար մեր ժողովուրդներին Ավետարանի լույսը և հոգիների փրկության քրիստոնեական հույսը: Միատեղ աղոթքով, միատեղ աշխատանքով մեր ժողովուրդներին բաշխենք նաև ներշնչանքը մարդասիրության ու խաղաղության ոգու, որ մեր Տիրոջ՝ Քրիստոսի ամենահարազատ իղձն է, ամենաջերմ պատգամը: Սուրբ Ավետարանը աշխարհի ամենախաղաղարար գիրքն է:

Այսպես ենք ըմբռնում Մենք նաև մեր օրերին զարգացող էկումենիկ շարժումը, որով բոլոր եկեղեցիները միախորհուրդ և միակամ կոչված են Աստուծո կամքը կատարելու երկրի վրա, որ նշանակում է ամեն բանից վեր՝ ավետարանական սերը, եղբայրությունը և խաղաղությունը հաստատել մարդկային աշխարհում: Ձեր եկեղեցին և հայ եկեղեցին, պուլկար ժողովուրդն ու հայ ժողովուրդը անցյալում անչափ տառապել և երբեմն նույնիսկ ազգովին նահատակվել են, նույն ճակատագրով, նույն Օսմանյան Կայսրության լծի տակ, ինչպես պատահեց մեր ժողովրդին 1915 թվականին, երբ կոտորվեցին շուրջ երկու միլիոն հայ քրիստոնյաներ: Անցյալի նման ողբերգություններ ապրած մեր ժողովուրդներն ու մեր եկեղեցիները այսօր առավել ջերմությամբ ու վճռականությամբ են մասնակցում ու պիտի մասնակցեն այն աստվածահաճո գործի կենսագործման, որ է ժողովուրդների բարեկամությունը և խաղաղ գոյակցությունը: Ինչպես Դուք, այնպես և Մենք տխրում ենք և ծանրորեն մտահոգվում, երբ միջազգային կյանքի հորիզոնի վրա ամպեր են կուտակվում, և տեղ-տեղ պատերազմի հրդեհներ են բռնկվում, և սակայն հրճվում ենք ու հոգեպես մխիթարվում, երբ այդ հրդեհները խափանվում են, և հետզհետե ամրապնդվում են խաղաղության սրբազան դատի պաշտպան ուժերը աշխարհում: Մխիթարական է մանավանդ հաստատել, որ բոլոր ժողովուրդների լայն զանգվածները հետզհետե ուղիղ են հասկանում արդեն, թե ովքեր են պատերազմների մեջ շահ փնտրողները և ովքեր են խաղաղության դատի պաշտպան ուժերը: Միջազգային այս իրադրության մեջ Մենք երջանիկ ենք հաստատելու, թե բոլոր ազատախոհ ու առաջդիմասեր երկրները, իրենց գլուխն ունենալով Սովետական Միությունը, հզորագույն գրավականն են հանդիսանում աշխարհի խաղաղության պահպանման: Թող Աստված Է՛լ ավելի զորացնի և անպարտելի դարձնի մարդկության խաղաղության պաշտպան ուժերը: Քրիստոսի Ավետարանը դավանող եկեղեցիներն ու հավատացյալները չեն կարող այլ ուղիով ընթանալ, չեն կարող պաշտպան ու պահապան չկանգնել խաղաղության դատին՝ բանիվ և գործով: Ահա նաև էկումենիկ շարժման հիմնական և առաջնահերթ առաքելություններից մեկը, որով նա պիտի արդարացնի ու արժևորի իր գոյությունը արդի աշխարհում, երբ մարդկային խղճի առջև խնդրո առարկա է դարձել ոչ թե Աստուծո գոյության, այլ մարդկության գոյության հարցը:

Ձերդ Սրբության եղբայրական հրավերով այցի գալով Ձեզ, Մենք խորապես մխիթարվեցինք նաև տեսնելով, թե ինչպես Հայաստանյայց եկեղեցու բազմահազար զավակներ, որոնք վաղուց ի վեր բնակություն են հաստատել ձեր սքանչելի երկրում, այսօր ապրում և գործում են խաղաղ ու ազատ պայմաններում՝ իբրև հավատարիմ և շինարար քաղաքացիներ պուլկար ընկերավարական հայրենիքի, նույնպես կանգուն և շեն պահպանելով իրենց աղոթքի տները, իրենց կրթական հաստատությունները և մշակութային կազմակերպությունները: Մենք ուրախ ենք, հաստատելու մանավանդ Պուլկարիո հայկական եկեղեցիների և թեմական կազմակերպության կրոնական և հայրենասիրական գործունեությունը և նրա եռանդուն մասնակցությունը աշխարհի խաղա-

ղության պահպանման աստվածահաճո գործում՝ բարեջան ղեկավարության ներքո թեմական առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի և թեմական խորհրդի, ատենապետությամբ՝ տիար Օնիկ Ասլանյանի:

Այս երջանիկ առիթը ցանկանում ենք սիրով օգտագործել, իբրև հոգևոր պետը բոլոր հայերի, հայտնելու համար պուլկարական պետության բարձր իշխանություններին Մեր սրտագին երախտագիտությունը՝ մաղթելով, որ Տերը հավետ խաղաղության մեջ ծաղկյալ և բարգավաճ պահպանի հերոսական Պուլկարիան և նրա աշխատասեր և տաղանդաշատ ժողովրդին:

Պուլկար և հայ ժողովուրդների պատմականորեն ևվիրագործված բարեկամությունը է՛լ ավելի ամրապնդվեց ամրակուռ հիմքերի վրա, ի մասնավորի մեր օրերում, երբ մեր երկու ժողովուրդներն էլ իրենց մի նոր վերածնունդն են ապրում, նույն համամարդկային արդար իդեալներով եղբայրացած ժողովուրդների զարգացման ճանապարհի վրա:

Ձերդ Սրբություն, ահավասիկ Մենք այստեղ ենք, պուլկար ևվիրական հողի վրա, ձեր պատմական սուրբ եկեղեցու հովանու ներքև, Ձեր կողքին, հոգով ու սրտով նույնացած Ձեր զգացումների, Ձեր մտորումների, Ձեր երազանքների հետ, անկեղծ սիրով դեպի Ձեր բարձր անձնավորությունը, ջերմ գնահատանքով դեպի Ձեր սրբազան առաքելությունը և խոր հարգանքով դեպի ձեր սուրբ եկեղեցին, պուլկար օրթոդոքս պատմական եկեղեցին, շատ հարազատ մեր քույր եկեղեցին:

Մեր հայացքը դեպի երկինք հառած աղոթում ենք, որ բարին Աստված Ձեզ քաջառողջ պահպանի երկար, շատ երկար տարիներ և Ձեզ պարգևի մշտանորոգ զորությունը սուրբ Հոգու, որպեսզի շեն ու պայծառ պահպանեք ձեր սուրբ եկեղեցին և նույն սուրբ Հոգու շնորհներով առաջնորդեք ու մխիթարեք պուլկար հավատավոր ժողովրդին:

«Զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայրն փառաց՝ տացէ ձեզ զհոգին իմաստութեան և յայտնութեան, գիտութեամբն իւրով» (Եփես. Ա. 17):